

5.7. Ստանդարտացում, չափագիտություն, սերտիֆիկացում

Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափաբանության և սերտիֆիկացման վարչության կողմից տրամադրված վիճակագրական ամփոփ տվյալների, 2000թ. հունվար-սեպտեմբերին ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման և նորմատիվ փաստաթղթերի պարտադիր պահանջների պահպանման պետական վերահսկողության ոլորտներում իրականացված գործունեությունը բնութագրվել է հետևյալ ցուցանիշներով.

1. Ընդունվել և պետական գրանցում են ստացել Հայաստանի 161 ստանդարտներ: ՀՀ տարածքում գործադրվել է 116 միջպետական, 15 միջազգային և 30 ՀՀ ստանդարտներ: Գրանցվել են արտադրանքի վերաբերյալ ՀՀ տեխնիկական 374 պայմաններ: Հրատարակվել են 14 անուն տեղեկատվական նյութեր՝ ստանդարտների կատալոգ, տեղեկատու, տեղեկատվական թերթիկներ:

Տրվել է համապատասխանության 6066 սերտիֆիկատ, այդ թվում ներմուծվող արտադրանքի համար՝ 5335, արտահանվող արտադրանքի համար՝ 436 սերտիֆիկատ: Մնացած 295-ը տրվել է Հայաստանում սերիական արտադրվող արտադրանքի համար: Սերժվել է արտադրանքի սերտիֆիկացման 61 հայտ: Հարկ է նշել, որ մեկ հայտի մեջ կարող են լինել մի քանի արտադրանք՝ մեկ կամ մի քանի տեսականիով: 74 արտադրանքի սերտիֆիկացումը մերժվել է անհամապատասխանության պատճառով:

2. ՀՀ տարածքում հավատարմագրվել է 20 լաբորատորիա:

Ըստ տեղեկատվության նույն աղբյուրի, 2000թ. 3-րդ եռամսյակում անորակության պատճառով չեն սերտիֆիկացվել ներմուծվող արտադրանքի մի շարք տեսակներ.

2000թ. 3-րդ եռամսյակում անորակության պատճառով չսերտիֆիկացված արտադրանքի ցուցակը

Երկիրը, արտադրող ձեռնարկությունը	Արտադրանքի անվանումը	Արտադրանքի մոդելը, տիպը	Քանակը
Վաճ. «Հայ-Ամերիկյան նավթամշակման ընկերություն», Վրաստան	Ավտոմեքենայի բենզին	վառելանյութ	97683կգ
ՌԴ, «Միկոյանսկի միսկոմբինատ»	Նրբերշիկ երշիկ եփած	սննդանյութ	50կգ 30կգ
—”—	Նրբերշիկ	—”—	200կգ
Իրան «Golnoosh»	մանկական ծծակներ	մանկական պարագա	120կգ
ՌԴ, ՍՊԸ «Տեկտրոն» ՍՊԸ	հակասառեցնող հովացնող հեղուկ	SO ՍՈՒԼ Օժ-40մակնիշի	1204.կգ
Իրան, վաճ. «BEHBOUD LALEH MANUFACTURING Co LTD»	շարժիչ յուղ դիզելային շարժիչների համար	SAE 50	12250կգ
Իրան«Shatier Plastic»	պլաստմասսե խաղալիքներ	փոքր մեքենաներ	32կգ